

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիտ;	համար
արեկակ	12 փր.
վեցամսեայ	7 "
Արժասահմանի	
համար՝ սարեկակ	15 փր.
վեցամսեայ	8 "
Անտիկայի	համար
սարեկակ	3 փր.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցումն տողը ու ուսջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքինն ա էլի սնկալնեռն համար 20 0/0 զեղջ կրչայ:

Հատնայի համար ձեռ. փ 40 սանթիմ է

ՉԱՐՄՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՄԱՐ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ
չի կիչ խմբագրութեան
հասցիին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարիտ համար
ձեռ. փ

15 ՍԱՆԹԻՄ

Արժասահմանի համար
ձեռ. փ

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ
տրուիք

ՇԱՐՄՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՇ-
ԽՈՒՈՐԸԱԿ ՍՕՅՆԱ ԳՈՂԱՔԻ ՎԻՃԱ-
ԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փափաքողները կրնան
իրեն գիտել
Ձար-Պորիս փողոց Վառնա

ՍԱԿԵՂՆԻԱ

ՄՕՏԱԿՈՒՏ ՎՏԱՆԳՆԵՐ

Հասնելու վրայ է Մակեդոնիոյ
համար ամենէն ճգնաժամային
եղանակը: Կարունը յեղափոխա-
կան ծաղիկը կը վերակենդանաց-
նէ: Ժամանակ մը պուլկարնե-
րուն կը վերագրուէր գարնանա-
յին այս յեղափոխական ծաղիկ
փթթումը: Արեգական զազլ ճա-
ռագայթ մը երկիրը քշիկ մը
տաքցնել սկսելուն պէս, աշխարհ
կրպակներ որ ամէն ժայռի տա-
կէն կամ ամէն ծառի բունին ե-
տեւէն քօժիթ աճի մը գուրս
ցցուի:

Երբեմնի այդ մարտնչումին
չըջանը այսօր անցած է այլեւս,
հր թէեւ վայրենի մարտն-
չումներ էին անշուշտ, բայց գո-
նէ գիւցազնական կողմը ունէ-
ին, որովհետեւ թշնամի մար-
դոց գէժ կը կուռէինք. հրա-
ցաններու գէժ կուռծք կը ցցե-
ինք:—Կյսօր պարզ մարդաս-
պաններ կան միայն, որոնք գիւ-
ղէ գիւղ կը թափառին մորթելու
համար:

Պուլկար քովիթէները, այս
վերջին տարիներուն, խոհեմու-
թիւնն ունեցան ընդհատելու ի-
րենց գործունէութիւնը որ շատ
սուղի կը նստէր գեղացի ընտա-
նիքներուն որոնք քաւութեան
նոխազը կը լլային անպասելի
վրէժխնդրութեանց: Յայտնի է
որ, գարնանը, այս տարի ալ
ինչպէս անցեալ տարի պատամ-
բութիւն չի պիտի ծագի Մակե-

դոնիոյ մէջ: Բայց միեւնոյն ա-
տեն, յայտնի է որ յոյն աւազա-
կախութեան ու Սուլթանէն վար-
ձատրուած ալպանացի կամ թուրք
համազգեստաւոր աւազակներ ի-
րենց գիւրին ու անվտանգ գոր-
ծը պիտի շարունակեն: Եւհու-
աղբիւր մըն է որ բոլոր այդ մար-
դոց ապրուստը կը հայթայթէ:
Այս անարգ ու արիւնշալի ձեռ-
նարկներուն աճման առաջին առ-
նելու համար, պուլկար կառա-
վարութիւնը Բ. գրան ծանուցա-
գիր մը կրկեց որոշ պահանջնե-
րով:—Արդարեւ թուրք կառա-
վարութիւնը բացարձակապէս կա-
րող է իրաց այս վիճակը կամ
անփոփոխ շարունակել և կամ ա-
նոր վերջ մը տալու: Մինչեւ հի-
մայ բոլոր կատարուածները ու
ասկէ վերջը բոլոր կատարուե-
լիքները, իր վերին հսկողու-
թեան տակ, կամ գէթ իր լուրի
համաձայնութեամբ կը կատար-
ուին, եւ եթէ քիչ մը կամք ու
զէ ունենալ, և ոչ մէկը պիտի
համարձակի նոյնիսկ այդ վայ-
րագութեանց զաղափարը մտքէն
անցունել: Քիչ մը դատողու-
թիւնը կը բաւէ իրեն հասնելու
համար թէ ուր է իր ճշմարիտ
չահը: Միթէ այս միջոցիս փոշի
մտահոգութիւններ ունի, բուն
իսկ իսլամ գաւառներու մէջ,
եմէնէն օրէօր գէշ լուրեր կը
հասնին, Պարտութիւնը կատար-
եալ է իր բոլոր հետեւանքնե-
րով, բանակը կը լրկի ապս-
տամբներու առջեւէն: Թուրքը
փախուստ կուտայ Արաբացիին
առջեւ, լքելով Սանան:—Դարձ-
եալ Արաբիոյ մէջ անճարակ
կերպով երեւան բերուած Ագա-
պալի խնդիրը Սուլթանը գէժ
առ գէժ կը գնէ Անգլիոյ հետ:
Կրօն թէ—ինչ որ յաւանա-
կան է—Ապտիւլ Համիտ ինքնի-
րենք մէջտեղ չի հաներ գերմա-
նական այս շիջանը: Անոր տակ
կը տեսնուի այն դիւանագիտու-
թիւնը որ այս միջոցիս Ռիցիերկ
րականի երկու ծայրերը իր աը-
րամագրութեան տակ առնելու
կը հետամտի: Թուրքերը մուծ

ճնշումներու առջեւ տեղի տուին
ու շատ գէշ դրութեան մը մէջ
ինկան, անանկ թշնամի մը գէ-
մերին հանելով, որ ներքի չի
գիտեր, և որուն համաշխարհային
գրութիւնը թոյլ չի տար որ նե-
րէ:

Ալպանիոյ մէջ ալ, կացութիւ-
նը մէկէն ի մէկ ծանրացաւ: Ո՞վ
է ասոնց գիւրազգած ջիղերուն
վրայ աղողը, որովհետեւ ալ-
պանացիք հազիւ ի՞նչ ինքնաբե-
րաբար ու է շարժում կրնեն:
Ետ առջամ Սուլթանը ինքն է
գրգռողը, որպէս չի եւրոպայի
հաւատացնէ թէ իր ձեռքին տակ
ամեն տեսակ բարենորոգմանց
գիւրազգող պահեստի ուժեր
ունի: Բայց երբեմն ալ ուրիշներ
Սուլթանին գէժ կը գրգռեն զա-
նոնք: Կայէս ըլլալ կերելի նա-
եւ վերջին իփէք ու Միթրովի-
ցայի գէպը: Լուր ելաւ թէ
թուրք զօրքերը յաջողք են
զսպել Ալպանացիները: Թէեւ
շատ վստահելի չեն թրքական
յազմանակներ աւետող տեղե-
կութիւնները, բայց մենք գի-
տենք թէ Սուլթանը իր գանձին
գունները որքան լայն բանալ ստի-
պուցաւ, համոզելու համար պա-
նոնք որ յաղթութիւն յանձն առ-
նեն: Մէկ խօսքով, Սուլթանը
այս միջոցիս հաղթութեան մտա-
հոգութեան պատճառներ ունի,
բացի դրամականէն: Լաւ պիտի
ընէր որ անսար պուլկար կառա-
վարութեան խոհուրդներուն եւ
վերջ գնէր հարստահարութեանց
սիւսեմին, որ եթէ շարունակէ
պիտի սպառէ համբերութիւնը
ժողովրդի մը, որուն քաջու-
թիւնը արդէն ապացուցուած է:
(Լա Մատտուան)

ԲՍՐԻՉ—ԼՕՆՏՕՆ

—o—

Բ.

ԷՏՈՒՍ Բ. ԵՒ ԱՆԳԼԻԱՅԻՔ

Կը փոխուի. սակայն, պատկերը
բոլորովին ջրանցքին միւս կողմը,

Լօնտօն:
Երկուշաբթի օր, փետ. 19ին, ըսա-
նախնական կարգադրութեան, հան-
դիսաւոր թափօրով մը էտուարու է.
կը թողու Պաքիսկի պալատը՝ շրջա-
պատուած իր արքունական շքախմ-
բով:

Ժողովուրդը, լօնտօնեան կծու ու
խոնաւ օդին տակ ժամերով կը սպասէ
ն. վեհափառութեան, ութը ձիե-
րով քաշուող ոսկեկուռ արքայական-
քը տեսնելու, որուն ետեւի բլադ-
ֆօրմին վրայ կանգնած են իրենց
ձիւնասպիտակ կեղծակերպող եւ ֆան-
թաստիկ տարազներով երկու հսկիչ-
ները, մինչ առջեւէն, բացի երկու
կառավարներէն՝ միեւնոյն հազուա-
տով, կը քալէ նաեւ արքունի զխա-
ւոր ախոռակաւոր: Կառքին կը յա-
ռաջեն ու կը հետեւին Լա Մ. Ֆ.
կառու (թիկնապան) կոչուած գի-
նախուժը, որոնց արծաթափայլ
լանջապահները կը վառին խօշոր ու
իրենց հետ միասին ձիերը ծածկող
կարմիր թիկնոցներուն սակէն: Ար-
քունի նուագախումբը ձիերու վրայ,
ձէյմեսան շրջանի յիշատակները ար-
թւոյնող տարազներով, ամէն տասն-
եակ քայլի մը կը գարնէ «Կօտ սէյվ
տը քիւկ» (տէ՛ր, պահէ թագաւորը)
ազգային երգը:

Հոս չկայ երբէք պարզութիւն:
Ամէն ինչ կը շողայ պերճանքով. եւ
նոյն իսկ հանդիսատես ամբողջ, ֆը-
րանսացիին անհոգ նայուածքով չէ
որ կը դիտէ իր վեհապետը:

Կը մօտենայ, գլխարկ կը հանէ,
թաշկինակ կը թօթուէ, «կեցցէ՛ ար-
քան» կը գոռայ, բայց եւ այնպէս,
գիտէ այն հսկայ անյարկաւոր որ կայ
իր ու իր վեհապետին միջեւ եւ վա-
րանուժ ակներեւէ վարմունքին մէջ.
մինչ ֆրանսացի գիտէ որ այսօր
ուան իր նախագահը երեկուան պարզ
քաղաքացին էր ու վաղուան իր բա-
րեկամը պիտի ըլլայ:

Կը շողանչեն արքայարանի զան-
գակները. կը բացուին Ուէստմի-
նիստրի պալատին դռները, որոնց
վրայ կարելի չէ նայիլ սոսնձ խոր-
հրդաւոր սարսուռի մը եւ թագաւո-
րը կը մօտենայ աթոռին, ուրկէ կը
կարգայ նաեւ իր երկարապատուժ
ճառը:

Էտուարտ կատարեալ արմատական
մըն է համոզումով. եթէ ներքի է
բնորոշել իր համոզումները:

Իր ճառը կարելի է ամփոփել հե-
տեւեալ կերպով:—

Բաղձանք՝ Մարքի խնդրի շու-
տափոյթ եւ խաղաղարար լուծման:
Մակեդոնական վիճակներու

կացութիւնը, որ հակառակ թափուած ջանքերուն, դեռ եւս խիստ դառնայող դրութեան մէջ է, բարեկուսելու անմիջական միջոցներ ձեռք առնելի: (Մեր դժբախտ երկրին անունն ու հոտն ալ չկայ ճառին մէջ):

Հնդկաստանի բանակային վարչութեան խոստացուած խնդիրները կարգադրել:

Յառաջացուի նոր սահմանադրութիւն մը թրանսվալի համար:

Ազգային ծախուց հոգատար հրահրում:

Իրաւաստի տնտեսական եւ կառավարական վիճակին բարուղում:

Բարեօրում նաեւ Անգլիոյ գեղջկական կացութեան:

Դաստիարակութեան հարցը մտաւորագոյն չըլլանի մը մէջ յառաջ բերել եւ կարգադրել:

Անգործներու հարցը նկատի առնել:

Աշխատաւորներու հատուցման օրէնքը վերանորոգել:

Մայրաքաղաքի հարկերը չափաւորել, եւայլն, եւայլն:

Բարլամէնթի բացման առաջին երեք հարգապնդումները եղան — Թրանսվալի նոր սահմանադրութեան խնդիրը, գրուած Մր. Չէմպրէյնի կողմէ (իստըր դիմադրակողմին ի բացակայութեան Պէլֆորի), Դաստիարակութեան հարցը եւ անգործներու հարցը, վերջինն գրուած Մր. Քէյր Լարտի կողմէ—իստըր բանուորական մասի մէջ բաժանուի:

Թրանսվալ պէտք է ունենայ այսուհետեւ լայն սահմանադրութիւն, Այն Քուլի (ննդիկ) աշխատաւորներուն, որոնք բերուած կը շահագործուէին հանքերուն մէջ, կառավարութիւնը կարտուն վերադառնալ իրենց հայրենիքը կամովի, յանձն առնելով վճարել անոնց ծախսերը, իսկ անոնք որ կը մնան, պիտի վարուին հետերին որպէս մարդ, հետեւ անոնց սահմանուած անասնական պատիժներէն:

Անգլիա դաստիարակութիւնը մինչեւ 14 տարեկան ձրի ու ստիպողական է. ասկէ անդին դպրոցներն ըլլալով զրամով, տղայք սահմանուած են թողուլ ուսումնական աս-

պարէզը եւ գործաւորական կեանքին դիմել: Ներկայ կառավարութեան իրենց գիւրուածներն ընծայելու ուսումնասէր աշակերտներուն, շարունակելու իրենց ուսումը:

Անգործներու հարցը է՛ն ողբալին է: Լոնտօնի մէջ անգործներու թիւը 100ով կամ անգարով չէ որ կը հաշուուի, շալ տասնեակ հազարներով:

Հարկ է ատոնց անմիջական օգնութիւն—գրական օգնութիւն, եւ ո՛չ թէ ողորմութիւն:

Վերոյիշեալ հարցերու իւրաքանչ իւրին Սըր Հէյրի Քէյմպլը—Պէլֆորմէն տուած է զոհացուցիչ ապահովութիւններ:

«Տէյլի Նիուզ», ազատական մամուլի նազոյն եւ հզօրագոյն զրօշակակիրը, ատոնք կը նկատէ մեծագոյն խնդիրները եւ, իր խօսքով, եթէ միմիայն ատոնք լինելի կատարուին, ո՛չ ժողովուրդը պատճառ կուենայ զղջալու իր ընտրած անգամներուն եւ ո՛չ ալ անգամները առիթ կուենան իրենց գործունէութեան շրջանը ողբալու:

«Եւ կաւելցնէ թերթը, եթէ այդ մարդիկը միայն ապրեցան այս մէկ գարնը կատարելու համար, ի գուր ապրած չեն անոնք»:

Իր կուսակցութեան գործի գլուխ անցնելէն ի վեր «Տէյլի Նիուզ» գրեթէ մոռցած է Հայկական ու Մակեդոնական հարցը, Բայց, փութանք ակնկէնել օր «Տէյլի Նիուզ» այս օրերս աշխարհն ալ է մոռցած: Թերթին մէկ ծայրէն միւսը ընտրութիւններու սեղեկութիւններն էին ասկէ քանի մը շաբաթ առաջ: Կիսա՛ 12 էջին Յը բարլամէնթական հարցապնդումներու մանրամասնութիւնները:

Սակայն կաւկած չուէինք որ շուտով իր նախորդ պաշտօնը կը վերստաննէն ու նորէն կ'ու պատկերներով կը դնէ Բարլամէնթի ու շաքրութեան Հայ ու Մակեդոնական խնդիրները: Կիսա որ հոն բաղմած են Պրայս, Կրէյ, Կլասսթըն, Լինչ եւ ուրիշներ:

Մաղթե՛նք...

Մ. Յոլսկ

o(—)

ՎԱՐՊԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Եւ ի պատիւ Վարդանանցի, Արշակ Բ. ազգային ողբերգութիւնը ի Քօսթանցա

Առաւօտեան, եկեղեցական արարողութիւնէն անմիջապէս յետոյ, ժամը 10ին դպրոցին սրահը լաւ կերակրուով զարգարուած օրուան հերոսներու պատկերներով, լեցուցեալ երկ սեռ ու խումբ բազմութեամբ:

Տեղւոյն քահանան ուսուցիչներու հրահանգով խօսք առնելով հանդէսը բացաւ:

Օրուան յարմար եւ ազգային եռանդուն երգերով սկսաւ հանգէսը: Ամենէն առաջ՝ Վարդանի երգը «Հիմի էլ լուենք»ը արտասանեց վարժարանի սաներէն Օր. Ազնիւ Զտիկեան, շատ վառ ու զգայուն շնչտերով, ուրախացուցիչ ծափերու արժանացաւ: ասկէ վերջը խօսք առաւ ազգային վարժարանի ուսուցիչներէն Պ. Սեթեան, հայ պատմութեան անցեալին վրայ ակնարկներ նետելով, պահ մը հանդիսականները այնպէս մը մագնիսացուց որ, կարծես թէ Աւարայրի դաշտը առաջնորդած ըլլար Յարգելի ատենախօսք ուրողներու ծափերու մէջ իր խօսքը աւարտեց, այս երիտասարդ ուսուցչին նոյն վարժարանին մէջ պաշտօն վարելը, խկապէս Քօսթանցայի գաղութին պատիւ մըն է:

Յաջորդաբար արտասանուեցան ուսանաւորներ, որոնք շերմագին ծափեր խլեցին:

Շատ խոր տպագորութիւն թողուցին նամանաւանդ սաներէն Օննիկ Սմարեանի, Արմենուհի Աւանեանի, Միրանոյ Տէրպետեանի:

Պայծառ Եղիշտեանի կողմանէ արտասանուածները, որոնք իրենց կարգին ծափերու արժանացան:

Ոսեցաւ նաեւ նոյն վարժարանի ուսուցիչներէն Պ. Պետիկեան, որուն նիւթն էր, հաւասարութիւն, եղբայրութիւն եւ միութիւն: Թէպէտեւ յարգելի պարոնին նիւթը չէր համապատասխաներ օրուան հանդէսին, բայց եւ այնպէս իր ատենախօսութեան մէջ նորէն մեծ իմաստ

մը կար, եւ մենք ու մեզի հետ միատեղ շատերը հասկցած եւ կոտորած էինք թէ՛ ի՞նչ ըսել կուզէր:

Այո՛ բացէ ի բաց կուզէր ըսել մեր կոտորած այն բաները, որ իրեն կերեւար թէ արգելուած էր. բայց երբոր—անուղղակի կերպով—որոշ գոյն ունեցող կուսակցութեան մը արգիտաբար շօշափելով ըսաւ. թէ՛ «մենք հայերս պէտք է ամէն քայլերն իս ուշադրութեամբ առնենք, աչքի առաջ ունենալով եւրոպական նենգամիտ քաղաքականութիւնը» այն ատեն, սրահը թնդաց ծափերու որոտումէն, կածես թէ՛ ամողջ հայութեան փափայլէր էր որ յարգելի ատենախօսք կարտայայտէր:

Վերջապէս... քահանային կցկտոր ու անիմաստ բառերու կուտակումով մը հանդէսը վերջացաւ: Եւ մենք այս ատիւ այն համոզումը գոյացուցինք թէ՛ այս քահանային ուսումնասէր, ուսումնական, եւ ազգասէր համբաւը, շատ աման գրիչներու ռէքլամով շինուած է եղեր. ինչ որ է անցնիլը:

Փետր. 10ին ուրբաթ գիշեր ի պատիւ Վարդանանցի, եւ ի նպաստ «Խաչար» ընկերութեան «Արաքս» սրահին մէջ Արշակ Բ. ազգային ողբերգութիւնը, նոյն ընկերութեան խումբ մը սիրող անգամներու կողմանէ ներկայացուեցաւ:

Հակառակ թաղական խորհրդոյ մէկ-երկու անգամոց ունեցած աննպաստ վարմունքին հանդէպ այդ ընկերութեան, նորէն այդ մեծ սրահը որոշեալ ժամէն շատ կանուխ գրաւուած էր երկսեռ ու խումբ բազմութեամբ մը, որուն նմանը դուռներեք կը տեսնուի ազգային հանդէսներու մէջ:

Ուսուցիչ նկարագրականի մասին ու եւ է գրելիք չունինք որովհետեւ հայերուս շատերը կարգացած են, իսկ գաւազն արեւակատարներու մասին, ասոնցմէ պ. Պետիկեան (Արշակ Բ.) իր գեղը շատ լաւ կատարեց, եթէ ի նկատի առնենք որ սիրող մըն է, եւ իրաւամբ ալ տրուած ծափերուն արժանի էր. նոյնպէս պ. Սեթեան (Շապուհ), որ մեծ յաջողութեամբ լը-

ԷՏՎԵՐ ՈՒՅՈՒՍ

ԿԱՐՍԻՐ ԷՋԵՐ ՑԱՐԻՉՄԵՆ

ԿԱՏԱՐԻՆԷ ԿԸ ՀԱՄԻՆ

Կատարելնէն անուրը կատուի՛ որպէս մէկը անբարոյական ու գազանաբարոյ: Զանազան տեսակներով կը նկարագրուի էն: Մէկը բսած է թէ ունէր չափազանց գեղեցկութիւն, երկայնահասակ էր ու ուժեղ, թէ քաղցրաբարոյ էր, ազնիւ ու շնորհալի, ցոյց տալով յարգանք ու պատկանանք բոլոր անոնց՝ որոնք խորհուրդը լուրջ էր, ու թէ ժամանակակից վեհապետներու առաջ կը վարուէր բարձր արժանիքով: Սա մարդու մը նկարագրութիւնն է: Կայ ուրիշ մը—սկարճահասակ էր ու կորզուրկ արժանապատուութենէ կամ շնորհքէ նոյն տեսքն իսկ կապացուցանէր իր նուաստ ծնունդը կը փաթթուէր հագուստներուն մէջ գերման կատակերգակ դերասանուէրի մը նման. կը կրէր երկոտասնակ մը

պատուանշաններ և նոյնքան սուրբերու պատկերներ ու մասունքներ կախուած էին հագուստին վրայէն, այնպէս որ քալած ատենը ջորիի մը պէս կը ճնկտար: Սա, անշուշտ կ'ընէ մը նկարագրութիւնն է:

Ինչ որ ալ ըլլար էն, Պետրոսէն մեծապէս լաւագոյն էր: Ինչ որ ալ եղած ըլլայ իւր ծագումը,—ու այդ մասին նուազ միտքապահանութիւն կայ քան Պետրոսինը,— էն ազնիւ էր անոր հանգէպ: Զսպող էր ու անտարակոյս, իր կեանքին շատ մը տարիները հաւատարիմ, բազում միջոցներ ձեռք առաւ սանձիւն Պետրոսի մոլուցիչները ու իր հեռատեսութիւնն ու սուր գատողութիւնը մեծապէս նպաստեցին Պետրոսի երբեմնակի ձեռնարկած կոիւնքէն յաջող դուրս գալու: Ստեն մը վերջ, Պետրոսի նկարագրին զիտակցութիւնով հնարաւոր անհուսի մը պատրաստութիւններ տեսաւ, ստանալով կաշառքներ ու անտեսելով ապականութիւնը, ինչ որ Պետրոս երեւան հանեց, սակայն ներքեց էնոր այս յանցանքը, որովհետեւ արդեն կայսրուհի ի ազգադրուած էր:

Ժամանակ մը յետոյ սիրահար մը ունեցաւ և ատոր ներսը զժուարին երեւցաւ Պետրոսի: Սիրահարը զըլխատուեցաւ ու գլուխը Պետրոսի հըրամանով, ապակիէ ամանի մէջ զրուած, գետեղուեցաւ կատարինէն սենեակը. որ տեսնէ ամեն օր, ու, տեսնելով, յիշէ:

ՊԵՏՐՈՍԻՆ ԿԵՐԸ

Պետրոս կը տարբերէր ստանայէն սա տեսակէտով: Պետրոս անմահ չէր Ուստի և, երբ ի լրումն ժամանակի, Մահը երկարեց ստան ձեռքը ու պահանջեց միապետը: Ժամանակիցները փրկանքի և երախտագիտութեան հեք մը քաշեցին ու իրենց շնորհակալութիւնը արտայայտեցին:

Պետրոսի վախճանը հասաւ իր զուկին սպանումէն վեց տարի վերջը յիսուն երկու տարեկան էր այդ պահուն թէ ի՞նչ ախտէ մեռաւ, ո՛չ ոք գիտէ: Բնատանիները պայղուած են, պարտկուած ալնուութեամբ մը, իրիւթէրի գործին մէջ. — Թիշկական

պատմութիւն Ռուսիոյ մէջ»:

Ուժեղ մայրը կը պոկէր մահամերձ, եւ Ռուսիա կը հրճուէր: Ապագայ սերնդի մըն էր թողուած իսէպոնի գանի: Իր հպարտակները չափազանցօրէն մերձ կայն բարբարոսութեան՝ գնահատելու իւր մտաց հիւթը և այն զարմանալի շարժառիթները՝ որոնցով մեծարուած է ան մինչեւ օրս: Հաղորդութիւն ստացաւ, զընում յայտնեց եւ մեռաւ: Կատարինէն արցունքի հեղեղներ թափելով բարձին վրայ, և սքու սէգա՞ մը արգէն կարգադրեց գահը բարձրացնել զէնի:

Մահուան անկողին վրայ տեղի ունեցած տեսարաններու պատմութիւններ կան՝ որոնք հաւանականաբար չի՞նձու են:

Թէ ինչպէս վերջին րոպէները անհարկու դարձած են զարհուրելի ուրուականներովը այն մայրոց և կանանց՝ զորս շարչարած էր. թէ ինչպէս զատապարտող ձեռքեր եկած են խաւարին մէջէն ու սարսափելի դէմքեր հեղան ու ծամածռած զինքը:

Բանաստեղծական սրղարութիւնը կը պահանջէր այսպիսի վախճան մը

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՌ ԱԿԱՆ ԱՐԱՐԻՒՆ
ՀԵՂԻՆԱԿԵՐՈՒՆ

ԸՆԴՀ. ԴԱՏԱՍՁԻՆ ՃՍՈՒՐ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(«Մանգու մէկ-էֆթեարուն քաղուած»)

(Շար. Ասի. քիւնի)

Վերադննից Ատեանին ընդհ. դատարանը նշանակեալն պէ՛յ իր այս ճառով պարզելէ ետք դատը, նախագահը սկսաւ հարցաքննել ամբաստանեալները, որոնցմէ էտուար Ժորիս թուրքերէն չը գլտնալով, եղած հարցումներուն պատասխանեց թարգմանի միջոցաւ. Ժորիս ըսաւ թէ ինչպէս որ հարցաքննութենէն ալ հասկցուած է, ինք ներթապէս չէ օժանդակած չալ յեղափոխական ընկերութեան այլ պարագայէս բարոյական աջակցութիւն մը միայն ընծայած է: Ըսաւ թէ բաւական է որ կարգացուին իր հարցաքննութեան թուղթերը. զորս պիտի հաստատէ: Նախագահը դիտել տուաւ որ իր յայտարարութիւնները պէտք է դատարարին առջեւ ալ կրկնէ. Հարցուեցաւ Ժորիսի թէ Վառձապուէն Գէնտիրեան ո՞ւր է. թղթակցած է անոր հետ, եւ Սամուէլ Ֆայն երբ եկած է Պոլիս, Ժորիս պատասխանելով ըսաւ թէ Վառձապուէն Գէնտիրեան երկաթուղիով գնաց Ֆրիւիպէ, թէ երկուսն ալ նամակ գրեց անոր եւ մէկ անգամ միասին պատասխան տուաւ Սօֆիայէ. եւ թէ չը յիշեր իր գրած նամակներուն պարունակութիւնը, որովհետեւ վրայէն վեց-եօթը ամիս անցած է Սամուէլ Ֆայն Ռուսիացի օրիորդի մը հետ երեք տարի առաջ եկաւ Պոլիս:

Հարցուեցաւ թէ կը ճանչնայ Լիբա Րիբսը եւ Սիլվիօ Րիչին, ինչ էր իրենց նպատակը. երբ ուզեցին սուն վարձել Պէշիքթաշի մէջ, եւ ուրիշ բացատրութիւններ ուզուեցան, Ժորիս ըսաւ թէ կը ճանչնար յիշեալ անձերը, եւ թէ Պէշիքթաշի մէջ իրենց տուն վարձել ուզելուն նպատակն էր արտադրել իր ընկերութեան համար, բայց կը ցատկէ Գոսթաւ Գոսթաւովի հետ իր մահաձեռք վիճակի մէջ (ներսէս կաթողիկոսի) ներկայութեան, գրեթէ անլսելի ձայնով մը զղջում կը յայտնէր, այն ատեն անորոնք վրայ բացմով քանի մը եւ այն սեռակիցներ, Կիւրնիսի մէկ-մէկ լիտրա ամբարձրեան պիտակ ըլլալով ամենալոյճուկ հայերէնով մը իրարու հետ կատակաբանութիւն ընելով բարձրաձայն կը ճրուղուողային. Կիւրնիսի ինչի յիշեցնել տուաւ անմահողներու Աղանեանի ան երկու խօսքը. «Ես չամիշ եւ կաղին ուտողներու մէջ ողբերգութիւն չեմ խաղար» Ա՛խ, երբ պիտի սորվի սա մեր գեղեցիկ սեռը, թատրոնի մէջ կարգապահութիւն:

Արա-Շահմիր

Պուգ, էջ

տակն էր աւելի դիւրութեամբ հասնիլ իրենց նպատակակետին ու ծանօթ անիծապարտ եղեռնական արարքն էր եւ որուն վրայ առաջին անգամ իրեն խօսք բացաւ Վառձապուէն Գէնտիրեան բայց մանրամասնութիւններ չը հարցուեց եւ ինքն ալ արդէն չի յիշեր յարակից պարագաները:

Նախագահը հարցուց թէ ո՞վ որոշոմ տուաւ այս անիծապարտ արարքը գործելու եւ ի՞նչ էր Հայ յեղափոխականներու նպատակը, Ժորիս պատասխանեց թէ իրեն ծանօթ անձերէն այս որոշումը տուողները եղան Լիբա Րիբս Վառձապուէն Գէնտիրեան Սիլվիօ Րիչի, Թրասա Սուվառովիչ եւ Գարի Սուվառովիչ, եւ թէ արարքին յաջորդ օրը դեռ պատուները գրի մը զրկուեցաւ որուն մէջ կը յայտնուէր խռովարարներու վիճակը. Ժորիս աւելցուց թէ ինք էսպիս չէր կրցած հասկնալ յեղափոխական ընկերութեան ընթացքը եւ ինչպէս բացատրած էր հարցաքննութեան պահուն, Պոլիս եկած միջոցին տեղւոյն վիճակին ծանօթանալ փափաքելով սկսաւ կարգաւ այնպիսի գիրքեր ու թերթեր որոնք Հայոց վիճակին վրայ հրատարակութիւններ կրէին: Այս թերթերը տեղեկութիւններ կուտային Հայ յեղափոխականութեան վրայ, եւ ի մասնաւոր Վերո Արմէնիա՝ թերթը որ կը հրատարակուի Բարիքի մէջ, երբեմն կուգար իրեն: Այս թերթերէն, ի մէջ այլոց երբ կարգաւ ջարդերու լուրեր ազգուէնով հասկցած էր թէ ձեռքէն եկածին չափ պէտք էր խիստ ազգու ցոյցեր եւ ձեռնարկներ ընել: Հարցուեցաւ Ժորիսի թէ այս ցոյցերէն ու ձեռնարկներէն ի՞նչ կը յուսացուէր ձեռք բերել, Ժորիս պատասխանեց թէ այսպէս կը յուսար որ ցեղային մրցակցութիւնը մէջտեղէն պիտի վերնար ետքը Վերո Արմէնիայի ուրիշ լրագրողներու եւ Հայ յեղափոխականներու կողմէ թուղթ մը հրատարակուեցաւ, որու մէջ ըսուած էր թէ երբ օտարականները գործը ձեռք չառնէին, այն ատեն յեղափոխականները վերջնական գործողութեան մը պիտի ձեռնարկէին:

Կեշտ կին մ'էր եւ մեծ յարգանքի արժանի ապագայ սերնդին կողմէ:

Երբ Պետրոս մեռաւ մէկ կողմ նետեց իշխանութիւնը եւ տասնեութ ամիսէն մահու ենթարկեց ինքզինքը:

Ապա անցաւ Հոն իրեն հետ, — թէ պէտեւ ոչ կեանքէ—Մէշիքթով խոհարարը: Սա, (Մէշիքթով, պատիկ բեր նակալ եւ մեծ գող մը. հարուստ բարեյաջող տարիներու լեռացումներէն, հողերու յափշտակիչ մը եւ շորթող մը սին տիտղոսներու, վերջացուց կեանքը չբաւարութեամբ աքսորի մէջ, օրական քանի մը կօպէկի վրայ ապրելով):

Կատարիէի յաջորդեց սպանուած Ալէքսիի վաւակը եւ Պետրոսի թոռը.— Պետրոս Բ.

Ալէքսիս, դաւաղութեամբ մեղադրուելով քնուեցին տակ մեռած էր. մայրը, Պետրոսի առաջին կինը, եւղիկօրա, դատապարտուած վանքի ցուրտ դաժանութեանց եւ ծերացած տառապելով:

Օր մը պահապանները եկան եւ բանալով նկուղին դուռը, առաջնորդեցին գողողուն կայսրուհին շքեղ սենեակ մը, թանկագին զգեստներու

Այս հրատարակութենէն վերջ, յեղափոխականները նոյն թուղթը իրենց զրկած տեղերէն պատասխանի կը սպասէին զոր չը կրցան առնել: Տարի մը անցնելէ ետք տեսնելով որ դէպքը պատահեցաւ, որոշեց բարոյապէս օժանդակել: Յիշեալ թուղթին հրատարակութենէն վերջ պարագաները իրարու յաջորդեցին եւ ոճիւրը գործուեցաւ:

Նախագահը շարունակելով բացատրութիւններ ուզել հարցուց Ժորիսի թէ Գէնտիրեան իրեն ի՞նչ տեսակ բաներ ըսած էր, Ֆիլիպէ երթալէ վերջ այժմ ի՞նչ եղած է, ի՞նչ նպատակաւ գացած էր, եւ ի՞նչ կերպով կրցած էր անցագիր ձեռք ձգել: Ժորիս պատասխանեց թէ Գէնտիրեան ըսած էր իրեն եղեռնական արարքին ձեռնարկին հղանակը. յիշեալ, Ֆիլիպէ երթալէ վերջ նամակ մը գրած էր եւ յետոյ բաց որ Սօֆիայ անցնելով հոն մեռած էր. Գէնտիրեան բան մը չէր ըսած իրեն թէ ինչու կերթայ Սօֆիա. ինք իր անցագիրը տուած էր Գէնտիրեանի, որ այն անցագրով կատարած էր ճամբորդութիւնը. թէ եւ, ըսաւ Ժորիս, վճարուած տեղեկութիւն մը չի կրնար տալ թէ Գէնտիրեան Միլիտարի մասնակցելու համար կերթար թէ ոչ, բայց ի վերջոյ պատահած դէպքերէն ինք այնպէս կուտայ թէ իրօք Միլիտարի մասնակցելու համար գացած էր Գէնտիրեան, Հարցուեցաւ թէ Գէնտիրեան իր նամակին մէջ ի՞նչ ըսած էր եւ ի՞նչ կերպով մեռած էր: Ժորիս պատասխանեց թէ Գէնտիրեան իր այս նամակին մէջ այսօր այսինչ տեղը կելթամաք պէս անկարեւոր կարգ մը բաներ ըսած էր միայն, եւ թէ Սօֆիայի մօտ Պալի Էֆէնտի գիւղին մէջ մեռած է ան պոմպայի մը պայթման հետեւանքով եւ հաւանական է որ այս պոմպան պայթած է փորձ կատարուած ժամանակ: Հարցուեցաւ թէ փորձարկուած պոմպաները ո՞ւր պիտի փոխադրուէին եւ այդ պայթումին ատեն քանի՞ զոգի մեռած էին: Ժորիս ըսաւ թէ հասկնալ չի գիտի թէ վիշտին անգամ փորձուած պոմպաները ո՞ւր պիտի տարուէին եւ թէ պայթումին ժամանակ Գէնտիրեանի հետ մեռած է նաեւ Սամուէլ Ֆայն:

(Շարունակելի)

բացուց իր ամբողջ դերը. նաեւ պէտք էր անտունեան (ներսէս կաթողիկոս) իսկապէս հայ կղերի ներկայացուց, ճշմարտութիւնով պահպանել:

«Ինչպէս ընկերութեան վարչութիւնը, պէտք է դերակատարներու մասին լաւ ընտրութիւն ընէ, զորօրինակ: «Սիւսակ» զերբ այն տեսակ պարոնի մը տրուած էր, որ բնաւ իր տարիքին եւ հասակին չէր համապատասխաներ, եւ դեռ ուրիշ ներ զորս հոս գրի առնելը գոնէ այս անգամ աւելորդ կը սեպեմ. է՛յ: ինչ ըսեմ, փառք Աստուծոյ Գոսթաւուցայի մէջ չեն պակտիր կարող երիտասարդներ. Ա՛խ Գոսթաւուցա՛, Գոսթաւուցա՛, անգամ մը տեսնելի Պուգերէնը, ուր էր թէ հոն ալ ըլլար Գոսթաւուցայի նման երիտասարդութիւն մը:

Արեւմտ ջերմագին կը շնորհաւորենք սիրողներու խումբը իր յաջողութեան համար, բայց կը ցատկէ Գոսթաւուցայի իրական սեռին, թատրոնի մէջ կարգապահութիւն չի գիտնալուն համար, — բացառութիւնը միշտ յարգի է — երեւակայեցեք անգամ մը երբ «Արշակ Բ» իր մահաձեռք վիճակի մէջ (ներսէս կաթողիկոսի) ներկայութեան, գրեթէ անլսելի ձայնով մը զղջում կը յայտնէր, այն ատեն անորոնք վրայ բացմով քանի մը եւ այն սեռակիցներ, Կիւրնիսի մէկ-մէկ լիտրա ամբարձրեան պիտակ ըլլալով ամենալոյճուկ հայերէնով մը իրարու հետ կատակաբանութիւն ընելով բարձրաձայն կը ճրուղուողային. Կիւրնիսի ինչի յիշեցնել տուաւ անմահողներու Աղանեանի ան երկու խօսքը. «Ես չամիշ եւ կաղին ուտողներու մէջ ողբերգութիւն չեմ խաղար» Ա՛խ, երբ պիտի սորվի սա մեր գեղեցիկ սեռը, թատրոնի մէջ կարգապահութիւն:

Իսկ մենք համակրելով Գոսթաւուցայի աղնիւ երիտասարդութեան, կը քննեմ աշխատութիւնը եւ կամքը, ամէն զօրութեանց կը յաղթէ, եւ այդ ալ արդէն փորձով տեսան «Ինչպէս» ընկերութեան ազնիւ անգամները, ուրեմն յաջողութիւն:

Արա-Շահմիր

Պուգ, էջ

Եւ բարեմիտ պատմիչներ հոգացած են սոյն պէտքը:

Պետրոս շատ քանի բրաւ Ռուսիոյ համար, որովհետեւ Ռուսիան իրեն համար էր— Պետրոս Սկսաւ բարեկարգել Ռուսիան, ու ըրաւ այդ բարեկարգեց հիմնովին:

Հազարաւոր մուրթիւններ ունէր եւ ո՛չ մէկ առաքիլութիւն այսինքն, ո՛չ՝ եթէ կընդունիք կորովը ու հետաքրքրութիւնը առաքիլութիւն: Գրուատական նկատողութիւնները որ կը կարգադրեն իր մասին, սուտ կը հնչեն, ի թէ ունէր ան բան մը բացի իւր քմապար բաղանջները գոհացնելէ, եթէ ունէր ան ուրիշ արժանիք բացի ինքզինքը հաճեցնելէ, իր կեանքի պատմութեան իւրաքանչիւր էջը բացարձակապէս կը ժխտէ ատոր: Ինչ որ նախարարեց ամեն ազգային սովորոյթ— դա կրնայ ըլլալ իր տապանագիրը:

Բրուսիոյ Յիշեցիք Մեծը լաւագոյն մը գրեց յիշատակելի հատուածի մը մէջ: Գրելով Վօլթերի, կըսէր.— «Իրաբարդը պարագաներ նպատակաւոր դէպքեր եւ օտար սովորութիւնը դարձուցին Յարը ուրուական հերոս

մը: Բանիմաց պատմաբան մը որ ականատես էր եղած անոր կեանքի մէկ մասի, անողորմաբար կը բարձրացնէ թող ու ցոյց կուտայ այս իշխանը որպէս մէկը՝ որ ունի մարդկային ամէն յանցանք եւ շատ քիչը անոր առաքիլութիւններէն: Նա այլ եւս չէ՛ ան՝ որ ըլլալով տիեզերական մտքով, գիտէ ամէն ինչ եւ կը բաղձայ քննել ամէն բան: Գիտահոգ անորով կուտարուող մէկն է ան՝ բաւականաչափ նոր՝ գիտողին երեւելու համար փոքր ինչ փայլուն ու շողողուն, Այլ եւս աներկիւղ մարտիկը չէ ան, որ ո՛չ վտանգէ կը վախնայ եւ ոչ ալ ծանօթ է ատոր, բայց եւ վատագի ու երկչոտ իշխան մը, նոյն իսկ իր գաղանթաբայ վարձուէքէն ալ զուրկ վտանգի պահուն— անողորմ իտաղութեան ատեն թոյլ պատերազմի մէջ»

Պետրոս վերջ եկաւ կատարիէ: Իւր թագաւորութիւնը կարճատեւ էր, զուարթ ու անփառունակ, բայց եւ այնպէս, իր բոլոր թերութիւններով ու թուլութիւններով, այս գեղմուկի ազգիկը Պետրոսի ամբողջ կենցաղամիջոցին զօպիղ, պար

ընդ կենցաղամիջոցին զօպիղ, պար

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սիլիստրէէն կը գրեն մեզ հետեւեալը .

«Այստեղ, ներկայ ամսոյ 9ին թատերական ներկայացում մը տրուեցաւ ինպստ թուրքիոյ հայ որբերուն, որուն զուտ արգիւնքը, միանալով այլ եւ այլ բարեսէրներէ ընդունուած նուէրներուն՝ ամսոյ 22ին զրկուեցաւ, ընդ ամէնը ոսկի ֆր. 570, թուրքիոյ հայոց Սրբազան պատրիարքին»

—Անցեալ կիրակի գիշեր, Զաւա Պիկարիայի մէջ Տէր և Տիկին Յակոբեաններու զիկապարութեամբ կազմուած «Օսթրալիա» գերասանական խումբը որ Վառնայ, Եկած էր, Թուստը ներկայացուց : Մէքիստօֆէլի գերը յաջող էր, ինչպէս նաեւ պատկերները :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պաղտատի և պաղտատեան բոր նահանգի մէջ խռովութիւններ տեղի ունեցած են : Հետզհետէ շարժումը մեծ ծաւալ կառնէ, Պոլիս հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ խռովարարները անգլիական գաղթականութեան մը վրայ յարձակած են : Երեք անգլիացի մեռած և քանի մը վիրաւորուած կայ : Վախ կայ թէ՛ չըլլայ որ մտտ օրէն այս նահանգը օտարները գրաւեն : Անգլիական դեսպանը խիստ գիւժում մը ըրած է :

— «Բիւպլիշէր Բրէսսին Պոլսէն կիմացնեն :

Պոլսոյ Ամերիկեան Միացեալ Նահանգներու գործակատարը Լիչման, շատ խիստ ծանուցագիր մը տուած է Բ. Գրան, որով Պոլսոյ դատաւորին պաշտօնանկ ըլլալը կը պահանջէ, իսկ ասոր պատճառը ուրիշ բան մը չէ՛ բայց միայն Պոլսոյ թուրքիոյ մէջ գտնուող Ամերիկեան միսիօնարներու գէժ՝ հրատարակած նախատախից գրքոյի :

Բ. Գրանը Լիչմանին ծանուցագիր մը տուած է, որով կը յայտարարէ թէ՛ թուրքիոյ մէջ գտնուող Ամերիկեան վարժարաններու օրինաւորութիւնը չը ճանաչեր :

— Թապաի և Ահապաի մէջ ծագած թրքա-եգիպտական միջադէպին առթիւ ու Զմիւռնիա—Այտըն երկաթուղոյ հարցին ձգձգուելուն համար, Պոլսոյ անգլիական դեսպանին տուած վերջնագիրը, տաճկական կառավարութիւնը շատ կը վրդովէ : Այս իսկ պատճառաւ նա որոշած է, որ առաջ հանքերու մասին ծագած

անհամաձայնութիւնը լմնցնել, Անգլիոյ և Ֆրանսայի կողմանէ առաջարկուած փոփոխութիւնները ընդունելով :

Հանքերու մասին ծագած վէճը արգելք կը հանդիսանայ մաքսային տուրքին 3 0/0 բարձրանալուն :

Այս հարցը քննելու համար կազմակերպուած յանձնաժողովը, խորհրդակցելու համար ժողով մը գումարած է վերստին :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մօտ ժամանակէն Բեթերսպուրկի մէջ շատ հետաքրքիր դատաւարութիւն մը տեղի պիտի ունենայ, ուր այս դատին պիտի մասնակցին Վիթէ, Թամիրեալէվ, Կարօն և Մաթիւլինսքին որպէս վկայ : Գործաւոր Բեդրովը, որ Կարօնի գործունէութեան դէմ կասկած յարոյց, գործաւորական կոմիտէի 12 անդամները, որպէս անուանարկողներ դատի տուած է, որովհետեւ այս վերջիններս անոր ըրած մերկացումները, յանդգնած էին հերքել :

— Ամսոյ 26 ի գիշերը 160 հոգի Սիպիր աքսորուած է, այս աքսորուածներու մէջ շատ մը ուսանողներ և փաստաբաններ կան : Բանաբը այնքան լեցուած են ու այլ եւս տեղ չկայ :

— Վարչապայէն կիմացնեն թէ՛ Բրակա անուն արուարձանի մօտ՝ գործաւորներու և ոստիկանութեան միջեւ ընդհարում մը տեղի ունեցած է : Գործաւոր մը և երկու ոստիկան մեռած է :

— Լօտցէն կիմացնեն թէ՛ այս քաղաքիս նահանգապետը վեց հարուածեանով սպաննած են : սպաննիչը ազատ է :

— Կոստաւրօզովէնա Տումաի ժողովատեղիի գրեթէ պատրաստուած է : Երեսփոխաններուն համար 600 է աւելի տեղ կայ :

Նախագահի բազմաթոռին դէմ կառուցուած է Ամպիօնը :

«Բեթերսպուրքի կազէթա» գրածին համաձայն Տուման 19 մայիսին բացուելու է : Ապրիլ 28 էն մինչեւ 14 մայիս փոխանորդագրութիւնները քննուելու են և նախագահային բիւրոյի ընտրութիւնը, յանձնախմբերու անդամներին կազմակերպումը և այլն և այլն :

— Բեթերսպուրկէն «Մորնինկ բողոք»ին կիմացնեն : Արտաքին գործերու նախարարութեան մէջ կը հաւաստեն թէ՛ տաճկական թասուկզգին, որպէս ծովային կայան առնելու համար, Գերմանական կառավարութեան բանակցութիւններու մասին բան մը չեն ընծայեր, սակայն եթէ նա հաստատուի, Ռուսիան պիտի հակառակի Գերմանիոյ այս բազմանքին, որ եւրոպական միւս

տերութիւններու շահերին հակառակ է :

ՍԵՐՊԻԱ

Հին արմատականներու ժողովը մերժեց այն առաջարկը, որով փափաք կը յայտնուէր Միացեալ արմատականներու նախարարութիւն կազմակերպել, նա պահանջ կը դնէ երկու արմատական կուսակցութիւններու ի մի ձուլումը : Այս իսկ պատճառով հին և անկախ արմատականներու միջեւ եղած բանակցութիւնը խզուեցաւ, ասի իմացուցին նաեւ թագաւորին : Կը կարծուի թէ թագաւորը դարձեալ Սթոյանովիչին պիտի յանձնէ, երկուսարդ — արմատական նախարարութեան մը վերակազմումը : Այս պարագային նախարարական մարմինն դուրս պիտի ելնեն Ելեմտից նախարար Մարքովիչը, ներքին գործոց նախարար Բովիչեվիչը, գուցէ հանրային շինութիւններու նախարար Խոտոբովիչ և պատերազմական նախարար Անդրիչ :

ՅՐԱՆՍԱ

Յրանսական նախարարական տեղապարտական կը շարունակուի, լուր կը շրջի թէ՛ նորակազմուելիք նախարարական մարմինն մէջ որպէս ներքին գործերու նախարար Բլէմանսօն ալ պիտի մուտ գործէ : Իրօն և Էքիէնը պիտի պահեն իրենց պաշտօնը :

— Արաի մէջ հանքային միծարկած մը տեղի ունեցած է : Կը կարծուի թէ 1658 գործաւոր մեռած են, արկածը յառաջ եկած է կազի պայթումէն : Կրակը տակաւին կը շարունակուի : Մինչեւ այս վայրկեանս հարիւրաւոր դիակներ կան հանուած : Խուռն բազմութիւն մը լալագին կը սպասէ ընդերկրեայ ուղիներու շուրջը, Կան գիւղեր որոնցմէ և ոչ մէկ այր մարդ կը մնայ, Սալմին անուն գիւղէն 500 հոգի կը պակասի :

Ներքին գործոց և հանրային շինութիւններու նախարարները արկածավայրը փութած են, Հանրապետութեան նախագահ Պալիէր 5000 ֆրանք, իսկ Տիւպիէֆ 10,000 ֆրանք զրկեր են Գարիէր որպէս նպաստ իտալիոյ թագաւորը հեռագրով մը ֆալիէրին յայտնած է իր ցաւակցութիւնը, փափաք յայտնելով անմիջական նպաստ մը զրկել արկածեալներու ընտանիքին :

Հանքերու ընկերութիւնը օրէնքի տրամադրութեանց համաձայն, հանքագործներու այրիներուն տարեկան եկամուտ մը ստիպուած է յատկացնել, իրենց

աճուարներուն վարձքին 30 0/0 40 0/0 համահաւասար, իսկ այս 40 միլիօն ֆրանքի պիտի նստի ընկերութեան :

Այս գործադրութիւնը մեծ յուշում պատճառած է բոլոր Թրանսայի Անգլիական լրագրիները ցաւակցական յօդուածներ կը հրատարակեն : Այն մարդիկ որ Գարիէրի մէջ մեռան — կը ըսեն անոնք — արգիւնապորձութեան մարաիրոսներ են :

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայէն կիմացնեն թէ՛ պատերազմական նախարարը, որպէս յայտագիր մը, ամբողջ բանակին մէջ ցրուած է, Լուզվէլի մէկ նամակը, որուն մէջ նա զինուորի մը համար պէտք եղած բարեմասնութիւնները կը յատկանշէ, ու կը յաւելու թէ՛ բոլոր քաղաքացիները պարտաւոր են զինավարժ ըլլալ և խաղաղութեան ժամանակամիջոցի մէջ պատրաստուիլ : պատերազմի ժամանակ իրենց պարականութիւնները լիուլի կատարելու համար : Ամերիկեան Հանրապետութեան նախագահ Ռուզվէլթը իր նամակին վերջը կը յիշեցնէ թէ՛ Միացեալ Նահանգները լաւ կազմակերպուած զինուած բազմաթիւ բանակի և նաւատորմի մը պէտք ունին :

ՃԱՔՕՆԻԱ

Ճաքօնական կառավարութիւնը որոշած է, ինչ ինչ նորութիւններ ներմուծել իր բանակին մէջ, զինուորական ծառայութիւնը երեք տարիէն երկուքի վերածելով, կուլէ բանակին թիւը 180 հազարէ 240,000 ի բարձրացնել, բանակը 33 0/0 աւելնայ պիտի, իսկ այս մասին ըլլալիք ծախսը միայն 7 1/2 միլիօնի կը յանգի :

Մ Ո Ւ Ր Ճ

Ա մ ս ա գ ի Ր
Գրական, Հասարակական և Բարոյական
Ի ս ժ ն ե գ ի ն Ր
Արտասահմանի համար տարեկան 12 րուպի վեցստիսայ 7 րուպի Հասցէ՝ Բ Է տ ա ք ս ի Օ ն տ Ե Լ ա ր Ե վ ի ւ Մ Ո Ւ Ր Ճ (Կովկաս) Թիֆլիզ

ՆՈՐ ՀՐՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Ս Ա Ր Ս Ո Ւ Ռ Ն Ե Ր
Քնարական Բանաստեղծութիւնք
Ե Ր Գ Ե Գ
Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Գ Ա Ն Ի Է Լ
ՎԵՆԵՏԻԿ—Մ. ՂԱԶԱՐ
1 9 0 6

Փոքրիկ հատորիկ մը մերթ սիրուն երգերով, ինչպէս Հաչիչը, մոխրի բերուէն առջեւ Վեշտեւ և այլն :